ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2024թ. մայիսի 23-ից հունիսի 05-ը
Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն
գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**

Հայկ Մայիլյան Պարգևի

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի Երևանի կենտրոնի գլխավոր տեսուչ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն ք. Պեկին, ք. Սիան - 2024 թ. մայիսի 23-ից հունիսի 05-ը:

4. **Հրավիրող կողմը.**

Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կոմերցիայի նախարարություն, Սննդի և ֆերմենտացման արդյունաբերության Չինաստանի ազգային հետազոտական ինստիտուտ:

5. **Գործուղման նպատակը.**

Վերապատրաստում, մասնագիտական կարողությունների և գիտելիքների բարելավում, «Հայաստանի Հանրապետության համար գյուղատնտեսական և հարակից արտադրանքի և ալկոհոլային խմիչքների խթանում և շրջանառության կառավարում» խորագրով դասընթացի մասնակցություն:

6. ***Քննարկման թեմաները.***

➢ Բի Յուան - (ՉԺՀ Շուկայի վերահսկողության և կարգավորման գլխավոր վարչություն) - Գյուղատնտեսական արտադրանքի արտադրությունը և վերահսկումը Չինաստանում:

➢ Խուան Լան - (Պեկինի Ուզի համալսարան) - Գյուղատնտեսական մթերքների և ենթամթերքների բաշխման համակարգը և զարգացման միտումները:

➢ Տան Վենլուն - (Շանդոնգի Առևտրի և Արդյունաբերության Համալսարան) - Չինաստանում ալկոհոլային խմիչքների շուկայավարման մոդելը և ապրանքանիշի կառավարումը:

➢ Խու Վենսյաո - (Ցի Լու պոլիտեխնիկական համալսարան) - Չինաստանի գինեգործության ներկա իրավիճակը և զարգացման հեռանկարները:

Չժեն Մյաո - (ՉԺՀ Սննդի և ֆերմենտացման արդյունաբերության Չինաստանի ազգային հետազոտական ինստիտուտ) - Գինեգործական արտադրանքի վերաբերյալ չինական ստանդարտների համակարգը:

➢ Խուան Յուտոնգ - (ՉԺՀ Սննդի և ֆերմենտացման արդյունաբերության Չինաստանի ազգային հետազոտական ինստիտուտ) - Չինաստանում նիշային գինիների առաջխաղացման և բաշխման ուղիների ստեղծման փորձ՝ վրացական գինու օրինակով:

**7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Այցելություններ՝

- Ճանաչողական այց ՉԺՀ Սննդի և ֆերմենտացման արդյունաբերության Չինաստանի ազգային հետազոտական ինստիտուտ.
- Այցելություն Գյուղատնտեսական արտադրանքի էլեկտրոնային վաճառքի բազա Յանգ Լինգ նահանգում.
- Այցելություն Յանգ Լինգ քաղաքի ժամանակակից գյուղատնտեսության ցուցադրական տարածք.
- Այցելություն Guangzhong ՍՊԸ լիկյորի արտադրամաս.
- Այցելություն China Resources Snow Breweries գարեջուր արտադրող կազմակերպության Սիանի մասնաճյուղ.
- Այցելություն Xian Winery Co., Ltd ալկոհոլային խմիչքների արտադրություն.
- Այցելություն Xi'an Aiju Հացահատիկային և ձեթային արտադրանքի արտադրություն:

Այցելությունների ժամանակ քննարկվել է արտադրության կազմակերպմանը, ներարտադրական հսկողությանը, լաբորատոր փորձաքննություններին և պետության կողմից իրականացվող վերահսկողությանը վերաբերող հարցեր:

**8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը Ֆինանսավորման աղբյուրը.**

Քննարկվել են լաբորատոր փորձաքննությունների ոլորտում հետագա համագործակցությանը առնչվող հարցեր: Քննարկվել են Չինաստանի ազգային ստանդարտների ձեռք բերմանն առնչվող հարցեր: Ձեռք է բերվել նախնական պայմանավորվածություն հետագայում նման ձևաչափով սեմինար դասընթացների կազմակերպման վերաբերյալ:

**9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

ՉԺՀ Սննդի և ֆերմենտացման արդյունաբերության Չինաստանի ազգային հետազոտական ինստիտուտի և ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի հետագա համագործակցություն, փորձի շարունակական փոխանակում:

Հայկ Մայիլյան
12.06.2024թ.